

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՀՀ ՆԵՐԳԱՂԹ-ԱԾ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Գայանե Հակոբյան

Սիրիահայերը բազմաթիվ սոցիալ-մշակութային խնդիրների կողքին բախվում են նաև հայի ինքնությունը կազմող կրոնական հարցերի հետ, որոնք կարևոր ազդեցություն ունեն հայաստանյան իրականությանը նրանց ադապտացիայի, առավելապես՝ փոխադարձ հանդուրժողականության և համագործակցության, ազգային-կրոնական արժեհամակարգի շուրջ համախմբված հայրենակիցների հետ հայրենիքում ապրելու գործընթացի վրա: Այդ նպատակով ուսումնասիրվել է վերջին չորս տարիներին Հայաստան տեղափոխված սիրիահայերի կրոնական և տոնածիսական վարքագիծը: Ուսումնասիրության համար հիմք է հանդիսացել սոցիոլոգիայում կիրառվող քանակական և որակական մեթոդաբանությունը. ձևայնացված և խորին հարցազրույցներ սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևանում և մարզերում:

Հայերը Սիրիայում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից: Տիգրան Բ Մեծի օրոք Ասորիքի (Սիրիայի) զգալի մասը որոշակի ժամանակահատված (մ.թ.ա. 80-60-ական թթ.) ընդգրկվել է հայկական տերության կազմում: Հայկական աղբյուրները հիշատակում են, որ այդ ժամանակ հայերի մեծ գաղթ է տեղի ունեցել դեպի Սիրիայի հյուսիսային շրջաններ¹: Սիրիահայ համայնքը մեծապես համալրվել է 1915 թվականին, երբ Հայոց ցեղասպանությունից հետո մեծ թվով հայեր են գաղթել Սիրիա: Սկզբնական շրջանում հայ գաղթականներն ապրել են ծանրագույն պայմաններում՝ հիմնականում վրանային ճամբարներում: Բնական է, որ սկզբնական փուլում հայերը մտադրություն չէին ունենա վերջնականորեն հաստատվել Սիրիայում, որտեղ նրանք հայտնվել էին միանգամայն նոր, ինչ-որ իմաստով խորթ մի միջավայրում, որն ուներ տարբերակիչ մի շարք գործոններ՝ էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլն: Սակայն հետագայում նրանք հաշտվեցին Սիրիայում հաս-

¹ Տե՛ս **Աբրահամյան Ա.Գ.**, «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», հատոր Ա, Երևան 1964, էջ 428:

տատվելու իրականության հետ, իսկ նշված գործոնները պարզապես նպաստեցին հայ տարագիրների էթնիկ և մշակութային ինքնության պահպանմանը¹:

Սիրիայում հայը երկրի սահմանադրության համաձայն համարվում է սիրիացի արաբ քաղաքացի՝ իր համայնքային-եկեղեցական պատկանելությամբ: Այդ համայնքները երեքն են՝

1. Հայաստանյայց Առաքելական եկեղեցու համայնք: Ունի երկու թեմ՝ Բերիո (առաջնորդանիստը՝ Հալեպի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցի), որը ենթակա է Անթիլիասին, և Դամասկոսի (առաջնորդանիստը՝ Դամասկոսի Ս.Սարգիս եկեղեցի), որը ենթակա է Էջմիածնին:
2. Հայ Կաթողիկե համայնք: Առանձին թեմ և թեմակալ ունի միայն Հալեպ քաղաքը:
3. Հայ Ավետարանական համայնք, որն իր եկեղեցիներով կապված է Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության հետ: Թեմական առաջնորդի նստավայրը ևս Հալեպ քաղաքն է²:

Սիրիահայ համայնքում կա նաև չորրորդ զանգվածը, որը սիրիական լատինական համայնքի մաս է կազմում, և որի եկեղեցական ծիսական լեզուն արաբերենն է:

Ըստ ներքևում տրված աղյուսակ 1-ի՝ Հայաստանում գտնվող սիրիահայերի մեծ մասը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ են, և բացի հալեպահայ մեծաթիվ համայնքից, նրանք ներկայացնում են Դամասկոս, Կամիշլի, Ռաքքա, Դեր Ջոր բնակավայրերը: Հայ Կաթողիկե եկեղեցու դավանորդները՝ միայն Հալեպ, իսկ Ավետարանական եկեղեցունը՝ Հալեպ և Քեսաբ համայնքներից տեղափոխված հայերն են:

Որակական հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ, չնայած **դավանաբանական փարբեր ուղղվածությունների**, սիրիահայերն այս հարցում հանդուրժողականություն են ցուցաբերում միմյանց և հայաստանցիների նկատմամբ, և որ հատկանշական է՝

¹ Տե՛ս **Гриншилдс Х. Т.**, Поселение армянских беженцев в Сирии и Ливане в 1915-1939 гг., Ереван, 1982/2. էջ 10.

² Տե՛ս **Փաշայան Ա., Հարությունյան Լ.**, «Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ», Երևան, 2011 թ., էջ 12-13:

այդ բառի ոչ թե բացասական¹, այլ դրական ընկալմամբ, այն է՝ միմյանց կրոնադավանաբանական արժեքների ու գաղափարների ճանաչողություն, ընդունում և հարգանք միմյանց նկատմամբ:

Աղյուսակ 1. Սիրիահայերի դավանաբանական ուղղվածությունը՝ ըստ բնակավայրի (%)

Բնակավայրը, որից տեղափոխվել են	Դավանաբանական ուղղվածություն			Ընդամենը
	Հայ Առաքելական	Հայ Կաթողիկե	Հայ Ավետարանական	
Դամասկոս	5.4	0	0	5.4
Հալեպ	78.4	6.5	4.3	89.2
Քեսաբ	0	0	1.2	1.2
Կամիշլի	2.2	0	0	2.2
Ռաքքա	1	0	0	1
Դեր Ձոր	1	0	0	1
Ընդամենը	88	6.5	5.5	100

Բոլորովին պատահական չէ սիրիահայերի այն գիտակցումը, որ գլխավորը քրիստոնեական հավատքն է, դավանանքը երկրորդական նշանակություն ունի, քանզի հայության տարբեր դավանանքային հատվածների միջև փոխադարձ համերաշխությունը ապահովում են շատ կարևոր երկու աշխարհայացքային հիմքեր՝ 1) ազգային բարձր ինքնագիտակցությունը, 2) ընդհանուր քրիստոնեական կրոնը:

Առաջինը ենթադրում է կրոնադավանանքային պատկանելիության փոխարեն ընդհանուր ազգային պատկանելիության գիտակցության բարձրացում, այսինքն՝ առաջին հերթին հայ, այլ ոչ թե առաքելական, կաթողիկե կամ ավետարանական լինելու զգացողության առաջընթաց: Երկրորդը միևնույն կրոնին պատկանող տարբեր դավանանքային շերտերի գիտակցության մեջ ընդհանուր կրոնական պատկանելիության գիտակցության խթանումն է, այսինքն՝ առաջին հերթին քրիստոնյա, այլ ոչ թե առաքելական, կաթողիկե կամ ավետարանական լինելու զգացողություն:

¹ Բացասական ընկալմամբ կրոնական հանդուրժողականությունը ենթադրում է անտարբերություն այլոց կրոնադավանաբանական հայացքների ու արժեհամակարգի նկատմամբ, ինչի արդյունքում ապահովվում է կրոնական հողի վրա թշնամանքի ու բախումների բացակայությունը:

Սիրիահայ համայնքի շրջանում վերջինս լիովին գիտակցված էր, քանզի մահմեդական աշխարհում կրոնը հայի ինքնության պահպանման կարևորագույն գործոնն է եղել: «Որ իսլամական աշխարհի մեջ ապրեցինք, մենք համարվեցինք կրոնական փոքրամասնություն: Վավերացումը էդպես էր: Ուրեմն, մենք պարտավոր էինք Սիրիայի մեջ ըլլալ հայ, քրիստոնյա և դավանանքի ենթակա՝ կա՛մ առաքելական, կա՛մ կաթոլիկ, կա՛մ ավետարանչական: Չի կարելի ազատ լինել, կամ որին ուզել պատկանել. դա արձանագրված պետք է լինի պետականորեն, որ մենք ունենանք մեր դավանանքը»¹:

Կրոնական վարքագծի ուսումնասիրության կարևոր ցուցիչներից է **կրոնի նկատմամբ վերաբերմունքը**: Այն հարցին, թե ինչպիսի վերաբերմունք ունեն կրոնի նկատմամբ, Հայաստան տեղափոխված սիրիահայերի 98%-ը նշել է, որ հավատում է (տե՛ս աղյուսակ 2): Շատ քիչ զանգված, այսինքն՝ հարյուրից մեկն է, որ անտարբեր է (1%) և չի հավատում (1%), ընդ որում, նրանք Առաքելական եկեղեցու հետևորդներ են: Համեմատության համար բերված են նաև ՀՀ չորս քաղաքներում գրեթե նույն ժամանակահատվածում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները:²

Աղյուսակ 2. ՀՀ հայերի և սիրիահայերի կրոնական վարքագծի համեմատական պատկերը, (%)

Վերաբերմունքը կրոնի նկատմամբ	Սիրիահայեր, ՀՀ, 2014 թ.	Վանաձոր, Տաշիր, 2012 թ.	Հրազդան, 2013 թ.	Սիսիան, 2015 թ.	ՀՀ քաղաքային բնակավայրեր (միջին թվաբանական)
Հավատում է	98	89	90	93	90.6
Անտարբեր է	1	8	10	1	6.4
Չի հավատում	1	3	0	6	3
Ընդամենը	100	100	100	100	100

¹ **Հակոբյան Գ.**, ԴԱՆ, ք. Երևան, 2014 թ., Հարցազրույց հիսունվեցամյա սիրիահայ տղամարդու հետ:

² Տե՛ս **Մկրտչյան Ս.**, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև ԴԱՆ), Լոռվա մարզի քաղաքային բնակավայրեր՝ Վանաձոր, Տաշիր, 2012 թ. Հրազդան 2013 թ., Սիսիան, 2015 թ.:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ի տվյալներից, հայաստանցի հայերի մոտ այս հարցում նշանակալի տարբերություններ կան՝ համեմատած սիրիահայերի ընդհանուր կրոնական վարքագծի հետ: Նկատվում է անհավատների կտրուկ աճ (ավելի ճիշտ՝ իրենց հավատացյալ չհամարողների), այսինքն՝ մերժողական դիրքորոշում ունեցողները մի դեպքում երեք (Լոռվա մարզի քաղաքային բնակավայրեր), մյուս դեպքում՝ վեց (Սիսիան քաղաք) անգամ ավելի են, քան սիրիահայերը: Անտարբեր զանգվածը գերակշռում է և՛ Հրազդանի (ութե անգամ), և՛ Վանաձորի ու Տաշիրի (տասն անգամ) բնակիչների շրջանում՝ ի տարբերություն սիրիահայերի և Սիսիան քաղաքի բնակչության: Իսկ, ընդհանուր առմամբ, համեմատելով այս քաղաքների միջին թվաքանական ցուցանիշի հետ, տեսնում ենք, որ սիրիահայերի շրջանում կրոնի նկատմամբ հավատը բավականին ամրապնդված է՝ ի համեմատ արևելահայերի զանգվածի, որոնց մեջ անհավատները մոտ վեց, իսկ մերժողական դիրքորոշում ունեցողները՝ երեք անգամ ավելի են:

Վերևում նշեցինք, որ դավանանքային հարցում սիրիահայերը հանդուրժողական են ինչպես սեփական համայնքի անդամների, այնպես էլ հայաստանցի հայերի նկատմամբ: Փոխարենը, վերջիններիս նկատմամբ անհանդուրժողականության որոշակի մթնոլորտ է առկա նրանց հավատի պակասի/բացակայության, եկեղեցու և եկեղեցական արարողությունների նկատմամբ անտարբերության, պատարագներին այլ կրոնական ուղղության ներկայացուցիչների առկայության, կրոնական տոների չիմացության, դրանք ըստ էության չնշելու, ինչպես նաև քրիստոնեական արժեհամակարգի կրողներ չլինելու պատճառով: *«Ինչ որ տեսել եմ երևանցի հայերի մեջ, կարող եմ ասել, որ այստեղի հայերը Աստուծոց ավելի հեռու են: Այստեղ խոսակցությունների ժամանակ պատահել է, որ հինգից չորսը ասել է, որ չի հավատում Աստուծուն: Հարցրել եմ՝ ինչո՞ւ, պատասխան չկա: Իմ կարծիքով, դա ընտանիքի դաստիարակությունից է գալիս...»¹:*

Սիրիահայերը հայաստանցի հայերի՝ իրենց ոչ հարազատ կրոնական վարքագծի պատճառների մեջ կարևոր են համարում հետևյալները՝


¹ **Հակոբյան Գ.**, ԴԱՆ, ք. Երևան, 2014 թ., Հարցազրույց քսաներկուամյա սիրիահայ կնոջ հետ:

- Հայրենիքում հայի ազգային և կրոնական ինքնությունը չվնասող միջավայրի առկայություն, ի տարբերություն սիրիահայի, ով այլ էթնիկ և այլ կրոնական միջավայրում ապրում է ինքնությունը պահելու առաջնային գիտակցությամբ: Հետևաբար, այս հարցում էական տարբերություններ են առկա, որոնք դրսևորվում են և՛ գիտակցական, և՛ վարքային, և՛ զգացական մակարդակներում:
- Հայաստանցի հայերի՝ եկեղեցական կյանքով ապրելու ցանկության բացակայություն, որի հետևանքով առաջնային նշանակություն են ստանում աշխարհիկ կյանքի հարաբերություններն ու գործունեության ոլորտները՝ երկրորդական պլան մղելով կրոնական արժեքները:
- Օտարամոլություն, ազգային արժեքներից հեռացում, որը, ըստ սիրիահայերի դիտարկման, ավելի բնորոշ է երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին:
- Խորհրդային շրջանում պետական մակարդակով իրականացվող աթեիզմի քաղաքականության ազդեցություն առավելապես ավագ և միջին սերնդի ներկայացուցիչների վրա:
- Ընտանեկան դաստիարակություն, որում երկրորդական տեղ է տրվում կրոնական դաստիարակությանը:
- Սոցիալ-տնտեսական վատ պայմաններ, որոնք, ձեռք բերելով առաջնայնություն կրոնական արժեհամակարգի նկատմամբ, ազդում են Հայաստանում ապրող հայի կրոնական վարքագծի վրա:

Հիմա ներկայացնենք այն տվյալները, թե ինչպես են սիրիահայերը վարքային մակարդակում արտահայտում իրենց հավատքը (տե՛ս գրաֆիկ 1):

Որակական հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ **եկեղեցի այցելության** հենքում հիմնականում տոնածիսական բնույթի շարժառիթներն են և ոչ՝ ժամանցային: Սակայն այս հարցին ավելի խորը չանդրադառնալով՝ նկատենք, որ սիրիահայերի քսանից մեկը (5%) Հայաստանում երբեք չի գնացել եկեղեցի, ընդ որում, նրանք հավասարապես և՛ արական, և՛ իգական սեռի ներկայացուցիչներ են (50%-50% համամասնությամբ), իսկ տարիքային առումով՝ երիտասարդ և ավագ սերնդի անձինք (ևս 50%-50% համամասնությամբ):

Գրաֆիկ 1. Սիրիահայերի՝ եկեղեցի այցելելու և պահք պահելու վարքագիծը (%)



Մշտապես եկեղեցի այցելողների թիվը բավականին մեծ է՝ 39%, և այս առումով ավելի ակտիվ են արական, քան իգական սեռի ներկայացուցիչները (56%-44% համամասնությամբ): Տարիքային առումով ակնհայտ ակտիվություն է նկատվում միջին տարիքային խմբում. մշտապես եկեղեցի այցելողների կեսից ավելին (56%) 36-55 տարեկան սիրիահայերն են:

Քրիստոնեական կյանքի կարևոր երևույթներից է նաև **պահք պահելը**¹, և, ի տարբերություն եկեղեցի այցելության, այնքան էլ լայն տարածում չունի սիրիահայերի շրջանում. նրանց 62%-ն ընդհանրապես պահք չի պահել (տե՛ս գրաֆիկ 1): Սակայն կան սիրիահայեր (9%), ովքեր թե՛ Սիրիայում, թե՛ Հայաստանում մշտապես հետևում են պահոց օրերին, ընդ որում, նրանք մեծամասամբ իգական սեռի ներկայացուցիչներն են (63%): Տարիքային չափանիշի հետ համադրության արդյունքում ստա-

¹ Պահքը (պասք) ուտելիքի կամ դրա առանձին տեսակների համար որոշակի ժամկետով սահմանված արգելքն է, կերակուրներից լրիվ կամ մասնակի հրաժարումը: Պահքի արտահայտած կարևոր իմաստը ինքնաքննության ու խոկումի ժամանակաշրջանն է, հատկապես Մեծ պահոց շրջանը, երբ հավատացյալները ոչ միայն կերակուրներից են հրաժարվում, այլև հեռու են մնում մարմնական հաճույքներից, ապաշխարությամբ և աղոթասացությամբ չափավոր, զուսպ կյանք վարում: Քրիստոնեության մեջ պահքը հավատի ամրապնդման միջոց է, որն ունի նաև մաքրագործական և ճգնակեցական նշանակություն: Այն քրիստոնեական եկեղեցական կյանքի կարևոր երևույթներից է:

նում ենք, որ պահոց օրերին մշտապես հետևողները մեծամասամբ (50%) միջին (36-55) տարիքի սիրիահայերն են:

Կարևոր հարցերից է նաև սիրիահայերի կրոնական վարքագծի և **տոների տարածվածության** փոխկապվածությունը, քանզի ավանդական տոները եկեղեցական տոնացույցի հենքը կազմող գլխավոր տոներն են և անմիջականորեն առնչվում են հավատքի հետ: Կրոնա-ավանդական տոներն արդեն շուրջ մեկ ու կես հազարամյակ գոյատևում են շնորհիվ եկեղեցու, որոնք ամրագրված են նրա կողմից մշակված տոնացույցներում: Եկեղեցին առավելապես քրիստոնեական տեսանկյունով է ներկայացնում այդ տոների տիպաբանությունը¹:

Աղյուսակ 3. Տոները նշելու տարածվածությունը Սիրիայում և ՀՀ-ում² (%)

Տոներ	Սիրիայում	ՀՀ-ում
Նոր տարի	99	97
Քրիստոսի Ծնունդ	99	94
Սուրբ Սարգիս	90	77
Տեառնընդառաջ	89	67
Ծաղկազարդ	96	80
Զատիկ	99	75
Համբարձում	91	51
Վարդավառ	91	59
Ս. Աստվածածնի վերափոխում (խաղողօրհներ)	93	56
Խաչվերաց	90	53
Վարդանանց	86	43
Սուրբ Վալենտին	70	50
Ավետում (ապրիլի 7)	27	36
Աշխատանքի օր (մայիսի 1)	70	43
1-ին հանրապետության օր (մայիսի 28)	80	54
Անկախության տոն (սեպտեմբերի 21)	54	53
Մարտի 21 (Սիրիայում մայրերի տոն)	96	51
Կանանց միջազգային օր (մարտի 8)	33	46

¹ Տե՛ս **Մկրտչյան Ս. Ա.**, Տոներ: Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն).- Եր.: «Գասպրինտ» հրատ., 2010, էջ 8:
² Հաշվարկում ընդգրկված են միայն այն միավորները, որոնք տոնի ժամանակահատվածում եղել են ՀՀ-ում:

Աղյուսակ 3-ում նշված են սիրիահայերի շրջանում տարածված տոները, որոնք ազգային ավանդույթների պահպանման, հասարակական հարաբերությունների կարգավորման, ինչպես նաև անձի պահանջմունքների պահպանման գործառույթ են իրականացրել Սիրիայում: Նշված տոներից յուրաքանչյուրը ծեսերի և սովորույթների մի ամբողջություն է իրենից ներկայացնում՝ հավատալիքներով, եկեղեցական հատուկ արարողակարգով, իր ուտեստով, խնջույքներով, շնորհավորական փոխայցելություններով, հարգանքի մատուցման ձևերով և այլ հիմնական բաղադրիչներով: Տոնը, լինելով կրոնական վարքագծի դրսևորման տարածված ձև, կարևոր դեր է ունեցել հավատքի ձևավորման և ամրապնդման գործում:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ի տվյալներից, Սիրիայում հայերի շրջանում երեք ամենատարածված տոներն են եղել Նոր տարին, Քրիստոսի Ծնունդը, Զատիկը (99%), այնուհետև՝ Ծաղկազարդն ու Խաղողօրհները, Համբարձումն ու Վարդավառը, Սուրբ Սարգիսն ու Խաչվերացը, Տեառնընդառաջն ու Վարդանանցը և այլն:

Կանանց և մայրերին վերաբերող տոների առումով նկատենք, որ Սիրիայում հայերի շրջանում ավելի լայն տարածում է ունեցել Սիրիայի Արաբական Հանրապետության պետական տոն համարվող մայրերի տոնը՝ ի համեմատ ապրիլի 7-ի և մարտի 8-ի, որոնք նրանց շրջանում սկսել են ավելի լայն տարածում ստանալ Հայաստանում եղած ժամանակ (համապատասխանաբար, 9%-ով և 13%-ով ավելի):

Ուշադրության է արժանի նաև ՀՀ անկախության տոների տարածվածությունը սիրիահայերի շրջանում: Սիրիայում հայ համայնքի համար առաջին հանրապետության տոնը՝ մայիսի 28-ը, ավելի նախընտրելի է, քան սեպտեմբերի 21-ը՝ փաստելով առաջին հանրապետության անկախության կարևորությունը սփյուռքահայ համայնքների համար: *«Ազգային տոներն են գերադասում, առաջնահերթությունը՝ մայիսի 28, անկախացում: Դա են սիրում, որովհետև եթե այդ օրը չլիներ, Հայաստանի Հանրապետություն չէր լինի: Այսպես գնացինք, մասնակցեցինք այդ խրախճանքներին, ոգևորվեցինք, լուսավորվեցինք հայրենասիրական այդ մղթանորոգով: Սակայն մայիսի 28-ին խանդավառությունն այնպես ավելի մեծ է: Իսկ այսպես գերադասելի է սեպտեմբերի 21-ը՝ որպես անկախաց-*

ման Կոն: Ես դրան ասում եմ վերասանկախացում, որովհետև անկախությունը մեկն էր՝ մայիսի 28»¹:

Ընդհանուր առմամբ, ըստ աղյուսակ 3-ի տվյալների, նկատելիորեն և ոչ համամասնորեն նվազում են թվերը բոլոր տոների առումով, այսինքն՝ Հայաստանում ոչ միայն պակասում են տոնը նշող սիրիահայերը, այլ նաև տեղի է ունենում դրա տարածվածության փոփոխություն, օրինակ, եթե Սիրիայում Չատիկն էր երրորդ տարածված տոնը, ապա Հայաստանում այն իր տեղը զիջում է Ծաղկազարդին և այլն:

Այս փոփոխությունները սիրիահայերը բացատրել են հետևյալ պատճառներով, որոնք իրենց հիմքում ունեն ոչ միայն մշակութային, այլ նաև սոցիալ-հոգեբանական և սոցիալ-տնտեսական տարրեր՝

1. Հայաստանում տոնը նշելու տարբերություններ՝ ի համեմատ սիրիահայ համայնքում ընդունված ձևի: Եվ սա բոլորովին պատահական չէ, քանզի հայոց արդի տոնական համակարգի ձևավորման գործընթացում նշանակալից դեր են ունեցել Հայաստանի երեք հանրապետությունները, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես քաղաքական կառուցվածքով, էթնիկ կապերի ուղղվածությամբ, կրոնի կամ հավատքի հանդեպ վերաբերմունքով, սոցիալ-տնտեսական գործընթացների ու մշակութային կապերի ինտենսիվությամբ, այնպես էլ ավանդական մշակութային տարրերի ադապտացիայի ներուժով²:
2. Տոնը նշելու տրամադրության բացակայություն՝ պայմանավորված Սիրիայում տիրող իրավիճակով, անհանգիստ և սպասողական հոգեվիճակով, հարազատների և ընկերների՝ Հայաստանում չգտնվելու փաստով:
3. Ֆինանսական միջոցների սղություն, քանզի տոնը նշելը ենթադրում է ոչ միայն եկեղեցական արարողակարգին մասնակցություն, այլ նաև բարեկամական և ընկերական միջավայրով խնջույքների կազմակերպում, փոխադարձ այցելություններ և այլն:
4. Ժամանակի սղություն, տոնական և կիրակի օրերի համար չկանոնակարգված աշխատանքային գրաֆիկ և այլն:

¹ **Հակոբյան Գ.**, ԴԱՆ, գ. Առինջ, 2014 թ., Հարցազրույց քառասունմեկամյա սիրիահայ տղամարդու հետ:

² Տե՛ս **Մկրտչյան Ս. Ս.**, նշված աշխ., էջ 126:

Հայաստանում և Սիրիայում տոնը նշելու տարբերությունների հետ կապված (դիտարկվել են սիրիահայերի շրջանում լայն տարածում ունեցող երկու տոները՝ Նոր տարի և Ջատիկ) փորձել ենք դուրս բերել այն ցուցիչները, որոնք կարևորվել են սիրիահայերի կողմից՝

- Եկեղեցական արարողակարգի կարևորություն և առաջնայնություն տոնի ընդհանուր խորհրդի մեջ:
- Տոնի՝ գիտակցական մակարդակում որպես կրոնական երևույթի կարևորում. *«Նույն կերպ ենք նշում, բայց այստեղ մի քիչ ավելի ուրախ տոն է համարվում: Բայց այնտեղի տարբերությունն այն է, որ Հիսուսի խաչելիություն է լինում: Մենք այդ ուրբաթ օրը գործի չենք գնում, պատրաստվում ենք, գնում Հիսուսի խաչելիության՝ իբրև տոն: Բայց այստեղ ես չզգացի այդ բանը. ոչ մեկը, հարգել չասեմ, դա կոպիտ կլինի, բայց ես դա զգում եմ...»¹: «Հայաստանում երեք անգամ Ջատիկ անցկացրի, բայց չկարողացա այդ ջերմությունը ապրել»²:*
- Վարքային մակարդակում տարբերություններ, որոնք տարբեր տոների դեպքում տարբեր կերպ են արտահայտվում: Եթե Ամանորին փոխայցելությունները շատ են, գերակշռող տեղ են զբաղեցնում տոնի խորհրդում՝ երկարացնելով այն մինչև հունվարի 13, ապա Ջատիկին, ընդհակառակը, քիչ են կամ բացակայում են փոխայցելությունները հարազատների շրջանում: *«Ջատիկի արտու, երբ որ եկեղեցի կէրթանք, անպայման հաղորդություն կանենք, գուկանք, բոլոր մեր հարազատները փոխայցելություն կէնեն: Էստեղ քիչ մը ավելի նվազ է, այցելություններ չկան: Այստեղ մոտիկություն չկա Ջատիկի կամ տաղավարներու օրերուն»³:*
- Տոնական ուտեստների տարբերություն, որը ոչ պակաս տեղ է զբաղեցնում կրոնա-ավանդական տոների ծիսական համակարգում: *«Ճաշատեսակներին այստեղ շատ եք ուշադրություն դարձնում: Փոքր Ջատիկին մեզ համար ձուկն է պարտադիր: Մի քանի ճաշատեսակներ կան, որոնք արաբական են, օրինակ, քացախով, քանի*

¹ **Հակոբյան Գ.**, ԴԱՆ, ք. Երևան, 2014 թ., Հարցազրույց հիսունութամյա սիրիահայ կնոջ հետ:

² **Հակոբյան Գ.**, ԴԱՆ, ք. Երևան, 2014 թ., Հարցազրույց երեսունյոթամյա սիրիահայ տղամարդու հետ:

³ **Հակոբյան Գ.**, ԴԱՆ, ք. Երևան, 2014 թ., Հարցազրույց յոթանասունամյա սիրիահայ տղամարդու հետ:

որ երբ Հիսուսն այդ ժամանակ ջուր ուզեց, իրեն քացախով ջուր փոխեցին: Ձուն անպայման է: Իսկ դուք ձեր Կաղանդի ճաշատեսակները դնում եք Ջապրի սեղանին: Մեր մոտ այդպես չէ: Եվ հետո մենք 13 օր չենք տոնում Կաղանդը, ինչպես դուք»¹:

Չնայած այս ամենին՝ սիրիահայերից ոմանք ոչ միայն ըմբռնողաբար են մոտենում տարբերություններին, այլ նաև փորձում են բացատրել դրանց հիմքում ընկած պատճառները. «Ազգագրությունն այստեղ ավելի լավն է, ավելի լավ գիտեն և ավելի լավ են նշում տոները, քան մեր մոտ: Մենք հեռվից նայում ենք և «կոպիտ» անում: Հետո, ճիշտ է, մենք հայեր ենք, բայց մեր ապրելակերպը սիրիական ապրելակերպ էր: Լիբանանում, Հորդանանում, օրինակ, փարբեր էր: Նույնիսկ շնորհավորելու խոսքերը փարբեր են: Օրինակ, Սիրիայում ասում են «բարի փարիներ», այստեղ ասում են՝ «բարի Ամանոր», Հորդանանում ասում են «շատ փարիներու»: Բոլորն էլ հայ են, բոլորն էլ՝ առաքելական, բայց ապրելակերպն ազդեցությունն ունի: Օրինակ, կարող է «շատ փարիներու» արտահայտությունը արաբերենի խոսքի ուղղակի թարգմանությունն է: Սա է փարբերությունը, այսինքն՝ սփյուռքի հայերը միանման չեն տոնում, ամեն մեկն իր երկրի ազդեցությունն ունի»²:

Այսպիսով, սիրիահայերի շրջանում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտությունը հնարավորություն է ընձեռում օբյեկտիվ պատկերացում կազմել սիրիահայերի կրոնական և տոնական վարքագծի վերաբերյալ: Հետազոտության արդյունքները վկայում են Հայաստանում հայի երկու տարբեր զանգվածների՝ արևմտահայերի և արևելահայերի կրոնական արժեհամակարգի ակնհայտ տարբերությունների մասին: Չնայած Հայաստան տեղափոխված սիրիահայերի վարքագծում էլ կտրուկ փոփոխություններ են տեղի ունեցել՝ և՛ եկեղեցի այցելելու հաճախականության, և՛ հավատքի հենքը կազմող կրոնա-ավանդական տոների տարածվածության տեսանկյունից, այնուամենայնիվ, նրանց համար հավատքի հարցը ներքին հոգևոր հարց է, և ազգային-կրոնական արժեհամակարգի բախումը ազդեցություն չի ունենում հայաստանցիների հետ

¹ **Հակոբյան Գ.**, ԴԱՆ, ք. Արովյան, 2014 թ., Հարցազրույց երեսուներեսամյա սիրիահայ տղամարդու հետ:

² **Հակոբյան Գ.**, ԴԱՆ, ք. Երևան, 2014 թ., Հարցազրույց քառասուներեսամյա սիրիահայ տղամարդու հետ:

նրանց անմիջական փոխազդեցությունների, առավել ևս, Հայաստանում հաստատվելու որոշման կայացման վրա:

ՀՀ ՆԵՐԳԱՂԹԱԾ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Գայանե Հակոբյան

***Բանալի բառեր** - սիրիահայեր, կրոնական վարքագիծ, փոնաժիսական վարքագիծ, կրոնադավանաբանական ուղղվածություն, հանդուրժողականություն, եկեղեցի, պահք, կրոնա-ավանդական տոներ:*

Հոդվածը նվիրված է սիրիական ճգնաժամի արդյունքում ՀՀ տեղափոխված սիրիահայերի կրոնական վարքագծի բացահայտմանը: Կրոնի նկատմամբ հավատը բավականին ամրապնդված է սիրիահայերի շրջանում, քանզի այն հայապահպանության առաջնային գործոնն է հանդիսացել Սիրիայում: Սակայն արդեն հայաստանյան միջավայրում նրանք նկատում են կրոնական արժեհամակարգի տարբերությունները, որոնք էլ ՀՀ հայերի նկատմամբ անհանդուրժողականության որոշակի հիմք են ստեղծում: Չնայած այս ամենին և իրենց վարքագծում էլ տեղի ունեցող որոշակի փոփոխություններին (եկեղեցի այցելել, կրոնա-ավանդական տոները նշել), սիրիահայերը, այնուամենայնիվ, փորձում են հաղթահարել կրոնական հարցերի շուրջ առաջացող խնդիրները՝ հայաստանցիների հետ անմիջական փոխազդեցությունների ժամանակ չեզտադրելով դրանք:

РЕЛИГИОЗНОЕ И РИТУАЛЬНОЕ ПОВЕДЕНИЕ СИРИЙСКИХ АРМЯН, ИММИГРИРОВАВШИХ В РА

Гаяне Акопян

***Ключевые слова** - сирийские армяне, религиозное поведение, ритуальное поведение, религиозно-теологическая ориентация, толерантность, церковь, пост, религиозно-традиционные праздники.*

Данная статья посвящена выявлению религиозного поведения армян, переехавших в Армению вследствие сирийского кризиса. Вера в религию довольно крепка среди сирийских армян, так как она была первичным фактором в сохранении армянской идентичности в Сирии. Но уже в армянской среде они замечают различия в системе религиозных ценностей, которые и создают определенную основу для нетерпимости по отношению к армянам РА. Несмотря

на все это и происходящие также в их поведении изменения (посещать церковь, отмечать религиозно-традиционные праздники), сирийские армяне, тем не менее, пытаются преодолеть возникающие по религиозным вопросам проблемы, не акцентируя их при прямом взаимодействии с жителями Армении.

THE RELIGIOUS AND THE RITUAL BEHAVIOR OF SYRIAN IMMIGRANTS TO RA

Gayane Hakobyan

Keywords: *Syrian Armenians, religious behavior, ritual behavior, religious-doctrinal orientation, tolerance, church, lent, religious and traditional feasts.*

The article is dedicated to the discovery of religious behavior of Syrian Armenians who moved to Armenia during Syrian crisis. Religious belief is highly reinforced among Syrian Armenians, as it's the primary factor of maintaining Armenian identity in Syria. But already in Armenian environment they notice differences between religious values, which are creating basis for intolerance toward Armenian citizens. Despite all these and some changes taking place in their behavior (visiting churches, celebrating religious and traditional feasts), Syrian Armenians, however, try to overcome problems relating religious issues by not focusing on them during direct interactions with Armenians.